

ՀԱՅՐԵՆԱԿԱՆՔ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԵՐԳ

Ահա հնչում են բոլոր զանգերը
 Եւ աւեսում են աշխարհներին.
 Բացե՛ք դռները, բացե՛ք արհերը,
 Ահա զալիս է մեր Նոր տարին:

Այս իրիկունը այնպես շեղ է, —
 Ձմեռան այսօր լո՞յս եւ ջերմութի՛ւն...
 Մեր երեւանում լոյսի հեղեղ է,
 Լոյսի ծովո՛ւմ է ամեն մի տուն:

Նորից զուգուել է մեր տոնածառը.
 Նայե՛ք, ամենուր՝ խինդ է ու երգ,
 Ուրախութիւնը այնպե՛ս անծայր է,
 Կարծես չի եղել այսպես երբեք:

Ընկե՛ր իմ, քեզ հետ մենք բախտաւոր ենք,
 Մեր նորոգ տառւայ այս լոյս ժամին,
 Ահա բացուում է վաղուայ մեծ օրը՝
 Լի երազանքով Ապագայի:

ԳՈՒՐԳԷՆ ԲՈՐԵԱՆ

ՀՈՂԸ

Որքան անուշ բուրմունք ու համ,
 Որքան հիւքեր արեւափամ,
 Բերք ու բարիք ու բարեկամ
 Չոր քրւացող այս հողի մէջ:

Որքան ներկեր ու նրբերանգ
 Միլ ու ծաղիկ ոսկեբերան
 Գոյներ շեղ ու հուրհրան
 Սեւ քրւացող այս հողի մէջ:

Որքան շունկ խորհրդաւոր,
 Որքան մեմունջ անուշ անդորր,
 Որքան աղմուկ անդնդախոր
 Լուռ քրւացող այս հողի մէջ:

Սիրսս նման է սեւ հողին
 Սիրսս նման է չոր հողին
 Սիրսս նման է լուռ հողին:

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Կարօրի պես անուշ ես դու, իմ Հայաստան,
 Բարսիներդ խժոցի պես եւ մեղմ, եւ զով,
 Աղբիւրներից նման վնիս եւ յորդառաս,
 Մաղիկներից նման բարի իմ Հայաստան:

Սեզ լեռներից նման հպարտ ու երկնամբարձ,
 Հողիդ՝ արհա նման լիքը երգով, խինդով,
 Քո հիմնաւորց վերերը խոր արդէն չկան,
 Ես նոր կանաչ համբաղ կ'երգեմ, իմ Հայաստան:

Որ ելնում ես որպես դրօշ հայրենական,
 Քո հանճարով, քո ասպետով այնքան շուրջ,
 Ես քո կանաչ, ծաղկած հանդի մի հեզ առուակ,
 Դու նոր համբայ, յաղբուրեան երգ իմ Հայաստան:

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԱՐԳԱՐԵԱՆ